Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի և գրականության (20 դասաժամ), մաթեմատիկայի (68 դասաժամ), ֆիզիկայի (26 դասաժամ), պատմության (32 դասաժամ), անգլերենի (6 դասաժամ), երաժշտության (6դասաժամ), ֆիզկուլտուրայի (8 դասաժամ), քիմիայի (15 դասաժամ) առարկաների, դասվարի (ռուսերենով ուսուցմամբ դասարանի) (19 դասաժամ), դասվարի (ռուսերենով ուսուցմամբ դասարանի) (20 դասաժամ) թափուր տեղերի համար:
Ռուսերենի իմացությունը պարտադիր է:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ՝ Հանրակրթության մասին՝ ՀՀ օրենքի 26-րդհոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձև 4),
5. թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (առկայությանդեպքում),
10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրեն ի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթեր ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը,բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 18-ին, ժամը 12:00-ին, Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝գ. Լերմոնտովո:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 6-86-58, (091) 01-23-21 հեռախոսահամարներով: